

« Ի՞նչ կուզէք որ ըլլայ, ըստ է
մէջեր փաշան, Եւրոպայ մեզ ուղ-
ղակի կամ մտնող զոյակի քաջաբերէ
եւ տե՛ս որ Ռուսիոյ դիմագրեմք, մեզ
մինակ թողուց: Եթէ Եւրոպայի ետ-
քէն բռնած ընթացքը նախատես-
ինք, Լոնտոնի դեպքանախորհրդին
պայմանները (1877 մարտ 31 ի դաշ-
նագիրը) կընդունէինք: Հիմա կը
մնայ մեզ միայն Ռուսիոյ թեւերուն
մէջ նեւտուիլ, որ կարելի է մեզ հա-
մար շատ շահաւոր հետեւութիւն պի-
տի ունենայ: Եթէ ասկից Եւրոպա-
կան խառնակութիւն մը յառաջ գայ,
աւելի լուր: Մեք տ'կորուսանելիք բա՛ն
չունինք, շատ շատ՝ մեր երկիրները
բաժնեկու համար պիտի կուտին: Ե-
թէ՛ ընդհակառակն՝ Ռուսիա իւր
կամայ թողուի, որ աւելի հաւանա-
կան է, մեր շահը կը պահանջէ որ
անոր դիմենք: Մեք տակաւին պէտք
ենք անոր՝ Եւրոպայի մէջ: Նա աւե-
լի պիտի ուզէ վտարի վրայ Եւրո-
պական թուրքիա մը տեսնել՝ քան
թէ բովանդակ Եւրոպայէն երաշխա-
ւորեալ նոր պետութեանց կազմու-
թեան հանդիսատես ըլլալ: Մեր գո-
յութիւնը մինչև հիմայ հարկաւոր
եղած էր Եւրոպայի, այսօր ալ Ռու-
սիոյ հարկաւոր է: Օսմանեան իշխա-
նութեան ծանրութեան կեդրոնն
այսուհետեւ Ասիա փոխադրուած է:
« Չուզեցին որ Սուլթանը շարունա-
կէ Եւրոպական վեհապետ մ'ըլլալ:
Այսուհետեւ՝ իբր Ասիական վեհա-
պետ և իբր խալիֆա՝ 100 միլիոն Ա-
սիացեաց պիտի իշխէ: Ուստի թուր-
քիա, իբր Ասիական տէրութիւն,
Ռուսիայէն յաւաքոյն դաշնակցի մը
չկրնար փախալքիլ և այսպէս Անգ-
լիայէն աւելի մեծ հակառակորդ չու-
նենար, որ մեռցաւ թէ թուրքիան
պահպանելով ինքզինք պիտի պահ-
պանէր: Եւրոպայի մէջ մեք Անգլիոյ
պէտք ունէինք: Ասիոյ մէջ՝ ինք մե-
զի պէտք ունի: Սուլթանն Անկիո-
նի գլխական կայսրութեան կրօնական
գլուխն է: Հետեւաբար այս վայր-
կեանէն սկսեալ Հնդկաստանի թա-
գուհին և իսլամին գլուխը դէմ առ
դէմ կը գտնուին: »

Պ. Ճ. Չարիֆի երէկուան Լէվընթ
Հէրըլտին ուղղեալ նամակաւ մը սուտ
կը հանէ այս խօսակցութիւնը:

Կարեն հետեւեալ կը գրեն Վի-
ենայի ֆոն Եսթրախովսկի Բոլիթիւք Լը-
րագրին.

« Ռուսոց կարս մտնելէն 'ի վեր
քաղաքը մեծապէս կերպարանափոխ
եղաւ. խանութները նորէն բացուե-
ցան, շուկաները կենդանի և երի-
նեղանք պատկեր մը կրնձային, փո-
ղոցները դիզուած աղտեղութիւնք
մաքրուեցան, մէկ խօսքով՝ ամեն
բան նոր կեանքով մ'ապրիլ սկսաւ, և
նոր իշխանութեան նկատմամբ թուրք
ժողովուրդեան կասկածը փարատեցաւ:
Որովհետեւ Կ. Պոլսէն ծանուցած էին
թէ Մոսկովները ոչ թէ Սուլթանին
և անոր տէրութեան դէմ պատե-
րաղմ կը մղեն, այլ 'խալիֆային և
հաւատարմից դէմ: այս պատճառաւ
տեղւոյն վարչութիւնը ռուսաց ձեռքն
անցնելէն 'ի վեր՝ մէկիւթներու հօճա-
ները չէին հաւատարմ. երբոր ռու-
սաց զինուորական իշխանութիւններն
հրաման կուտային որ իրենց կրօնա-
կան պաշտօններն առաջնուան պէս
կատարեն: վերջապէս ռուս հրամա-
նատարք ստիպուեցան իրկին և կըր-
կին վտառահանել որ ամենափոքրիկ
արգելք մը չը պիտի դրուի որ և ի-
ցէ կրօնական արարողութեանց: Ա-
սոր վրայ իսլամ միւլէզներն նորէն
միւսարեւներն ելնելով հաւատարմեալ-
ներըն 'ի մէկիւթ կոչել սկսան: »

« Կովկասեան փոխարքայ Մեծ

գուքսին մէկ հրամանագրին համե-
մատ՝ ոչ միայն բոլոր իսլամ պաշտօ-
նատարք իրենց պաշտօնը պիտի պա-
հեն, այլ և տէրութեան պաշտօններ.
րուն մէջ ալ պիտի ընդունուին այն
ամեն անձինք որ յարմարութիւն
ունին՝ առանց կրօնի և ազգի խնո-
րութեան: Եւ արդարեւ 24 իսլամք
դատաւորութեան (գատի) և այլ
վարչական բարձր պաշտօններու կոչ-
ուեցան: Հարկ չկայ ըսել թէ ներ-
կայ դրութիւնը բոլորովին նոր կեանք
մ'է քրիստոնէից համար, որք գլխա-
ւորապէս Հայերէ և Յոյներէ կը բաղ-
կանան: Հայք, որոնց մեծագոյն մու-
սը զիւրականաց են, իսկոյն եռանդ-
եամբ աշխատութեան սկսան, որ ի-
րենց յատկանիւն է, և իրենց տու-
ները նորոգելու ձեռնարկեցին, այն-
պէս որ ամենէն աւելի կենդանու-
թիւնն Հայոց թաղին մէջ կը տիրէ: »

Գաղղիական թան լրագրին Բեդ-
բոսպուրկի թղթակիցը կը գրէ իրեն
թէ Կադի Օսման փաշան խարքովէն
հետեւեալ նամակը գրկեր է Բեդբոս-
պուրկի կոչու լրագրին:

« Տէր.

« Լրագիրք ունանք կը ծանուցա-
նեն թէ ի՞ր զօրքերս Բէֆլայի մէջ
150 Ռուս զօրքի ողջ թագեր են: Այդ-
խօսքն յայտնի սուտ մ'է, և ճշմար-
տութիւնը գիտցողները բազմաթիւ
են: Գերիներու վրայ գործուած ան-
գըթութեանց դէմ ամենէն առաջ
ես կը բողոքեմ: »

Մէլէր Կալէ Օսման

Վերջին թղթագրերով եկած Եւ-
րոպական լրագրաց մէջ հետեւեալ
լուրերը կը կարգանք:

Պէրլին 24 փետր.

Դեսպանախորհրդին հիմնադիրը
չինելու մասին ծագած դժուարու-
թեանց պատճառաւ Աւստրիոյ և
Անգլիոյ կառավարութեանց իրարու
մերձեցումը մտահոգութիւն կը պատ-
ճառէ:

Պ. Պիտերք նորէն իմացուց Անտ-
րաքի կոմսին թէ Գերմանիա իւր բո-
լոր աղբեցութեամբ Աւստրիոյ օրի-
նաւոր շահէրը պիտի պաշտպանէ դե-
պանախորհրդին մէջ:

Չէրնովից 24 փետր.

Ռուսերը մինչև ամառոյ վերջն
150000 զօրաց բանակ մը պիտի դու-
մարեն Սէրէթի գծին վրայ:

Հայաստանի զօրաց մէկ մասն ալ
ծովու ճանրով Օտէնա պիտի բեր-
ուի՝ Եւրոպական բանակն աւելի ըստ-
ուարացնելու համար:

Վիեննա 25 փետր.

Ռուսութեան թիւները կը շարու-
նակեն: Դեսպանախորհրդին եթէ
տեղի ունենայ, ապրիլ ամսէն առաջ
չպիտի կրնայ դուրսորդիլ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 2 մարտ

Պ. Բոյ տը Գառնեաք Պոնաբութեանն
և Պ. Թոմսոն ձախակողմեան երեսփոխա-
նը ժողովին վերջին նիստերէն միոյն մէջ
պատահած միջադէպի մը պատճառաւ
մենամարտութեան եղան, և Պ. Թոմսոն
սուրի հարուածով վիրաւորեցաւ կոկոր-
դէն: Բժիշկները կը յուսան աղտեղ զոյն
մեռնելէ:

Հոսմ 3 մարտ

Կը հաւատեն թէ Կաթոլիկ տէրու-
թեանց կողմէ եղած դիտողութեանց վը-
րայ, որք աւելի հաշտութիւն քաղաքակա-
նութեան մը կը բաղձան, Պապը չուզէր
Սիմէօնի կարգիմարտ արտաքին յարաբե-
րութեանց պաշտօնին մէջ պահել:

Փարիզ 4 մարտ

Երէկ 17 երեսփոխանաց ընտրութիւն
կատարուելով տասն հանրապետականք

ընտրուեցան: Ընտրութիւնին անվաւեր
դատաւած միապետականներուն չորսը
միայն վերադին ընտրուեցան: Մնացեալ
երեք ընտրութիւնը համեմատականի մնա-
ցին:

Լոնտոն 5 մարտ

Թայմզ կը կարծէ թէ դեսպանախոր-
հուրը կամ տէրութեանց ժողովը Պէր-
լին պիտի դուրսորդէ, և թէ Կորչաքոֆ և
Պիտերք իշխաններն և Անտրաքի կոմսն
ալ ներկայ պիտի գտնուին:

Լոնտոն 5 մարտ

Օսմ. Բոնա.	8 1/2
Փրիւ.	4865 8 5/8
»	4869 8 1/8
»	1871 33 3/4
»	1872 13
»	1873 8
» Երկրպ.	51
Անգլ. Բոնա.	95 5/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն իւր թիկնապահ-
ներէն մին Այսթէֆանոս զրկեց՝ հաշ-
տութեան ստորագրութեան վրայ իւր
ինքնակցութիւնն յայտնելու մեծ
դուքսին: Ասոր փոխարէն մեծ դուք-
սին ալ նախկին առաջին թարգման
Պ. Օնուկ Վեհ. Սուլթանին զրկեց
նամանորինալ պաշտօնով:

Վսեմ: Սաֆվէթ փաշան երեք-
շարթի առաւօտ մայրաքաղաքս վե-
րադարձաւ: Սատուլաֆ պէյին, Հա-
մաճեան Սարգիս Էֆէնտիին և հե-
տը գանուող ուրիշ պաշտօնատարաց
հետ, և անմիջապէս կայսերական
պալատն երթալով՝ Վեհ. Սուլթանին
ներկայացուց Պալլարիոյ իշխանու-
թեան աշխարհացոյց քարտէսն, որ
դաշնագրութեան կցորդեալ է:

Ն. Վոսմաթիւնն առաջին նախա-
րարին հետ խորհրդակցելէ ետեւ ե-
րէկ առաւօտ նորէն Այսթէֆանոս
Դեւոց Նիքօլա Մեծ դուքսը Կ. Պոլս
հրաւիրելու:

Հետեւաբար կը յուսացուի որ Ն. Կ.
բարձրութիւնն այսօր Կ. Պոլս պիտի
գայ 200 զինուորական հրամանատա-
րաց և սպայից հետ:

Մայրաքաղաքին նախորդ. ռու-
սական դեսպան իկնաթիէֆ Կոմսն այ-
սօր քաղաքի իրենց քանակութեամբ
երեքշարթի օրը զինուորական հա-
մադգեստով Կ. Պոլս եկաւ Այսթէ-
ֆանոսէն, և ուղղակի Բ. Դուռն եր-
թալով՝ սուլթանին նախարարին հետ
տեսակցեցաւ:

Կըսուի թէ իկնաթիէֆ Կոմսն այ-
սօր վաղը Բեդբոսպուրկի պիտի երթայ
հաշտութեան դաշնագրին վաւերաց-
մանը ներկայ գտնուելու: Կըսուի
նաեւ թէ Օսմանեան կառավարու-
թիւնն ալ յատուկ դեսպան մը պի-
տի զրկէ 'ի Բեդբոսպուրկ:

Իրէկուան Լէվընթ Հէրըլտի խօս-
քին նայելով, Բ. Դուռն տակաւին
տէրութեանց դեսպաններուն պաշ-
տօնապէս չէ հաղորդած հաշտութեան
դաշնագրին պատճէնը:

Յիշեալ լրագիրը քանի մը նոր
տեղեկութիւններ կուտայ հաշտու-
թեան պայմաններուն վրայ:

Տէտէ աղած Պալլարիոյ հետ չպի-
տի խառնուիլ, բայց Տրամա և Բա-
վարա Պալլարիոյ նաւահանգիստ պի-
տի ըլլան Եգէական ծովուն մէջ: Հա-
րաւի կողմէն Պալլարիոյ սահմանը
մինչև Մանասթըրի շրջակայները պի-
տի տարածիլ, Անթոքը, Սէրէզն ու
Սեւանիկը դուրս թողլով: Հիւսիսի
կողմէն Մանասթըրի սկսեալ դիմ
Չէրնովոստ յանգրելով (Դանուբի
եզրը), Պալլարիան պիտի բռնէ
Տրպիզոնայէն, որ Ռուսաց պիտի տնց-
նի: Եւսմա և Վառնա Պալլարիոյ
պիտի տրուին: Վերջապէս Պալլար-
իոյ իշխանութեան վճարելիք տա-

րեկան հարկն՝ անոր մինչև հիմա տե-
րութեան դանձու տուած զուտ հա-
սոյթէն պակաս պիտի ըլլայ: Հաշ-
տութեան դաշնագիրը դրամով վը-
ճարուելիք 40 միլիոն լիւրային նկատ-
մամբ կըսէ թէ ասոր վճարման եղա-
նակը Ռուսիոյ կայսեր և Սուլթանին
մէջպիտի որոշուի յետոյ: Պատերազ-
մական դերեաց նկատմամբ ալ ըս-
ուած է թէ դաշնագրութեան վա-
ւերացումը կատարուելէն անմիջա-
պէս ետքը պիտի փոխանակուին՝ ա-
նոնց ապրուստին համար եղած ծախ-
քը փոխադարձաբար վճարուելով:

Կըսուի թէ հաշտութեան դաշ-
նագիրն որ 100 ի չափ յօդուած է
բաղկացեալ է կըսեն, Ռուսիոյ կայ-
սեր և Սուլթանին կողմէ վաւերա-
նալէ ետեւ պիտի հրատարակուի
պաշտօնապէս: Խալայի պարունակու-
թիւնը հետզհետէ իմացուելու վրայ է:

Կը լսենք թէ Այսթէֆանոսի Հա-
յոց եկեղեցւոյն քարոզիչ Արթ. Տ.
Գարեգին վարդապետ թաթարեան
երեքշարթի օրն հանդիսաւոր Ս. Պա-
տարագ մատուցանելով, Բարձր. Նի-
քօլա մեծ դուքսն և զինուորական
հրամանատարք ներկայ գտնուելու են,
այն հոգեւոր հանդիսին:

Տփլիսի հրատարակեալ Մշակ ա-
նուն թերթը ներկայ տարւոյս յուն-
վարէն սկսեալ ամենօրեայ եղած է,
որուն համար մեր յատուկ խնդակ-
ցութիւնը կը յայտնենք քաղաքի խմ-
բագրին յաջողութիւն և յարատեւու-
թիւն մաղթելով:

Ասիոյ Օսմանեան բանակին հրա-
մանատարները դատելու պաշտօն ու-
նեցող պատերազմական ատենադ. Պա-
յաղիտի զօրաբաժնին հրամանատար
Փայիզ փաշային դատաստանը տես-
նել սկսած է:

Ինչպէս որ ծանուցեց էինք, երեք-
շարթի իրիկուն պատերազմական
գործոց նախարար Վսեմ: Բեֆլ փա-
շան շքեղ կոչուեց մը տուաւ Սպա-
րապետի դուռն 'ի պատիւ Ամերի-
կայի Միացեալ-Նահանգաց նախորդ
նախագահ Կրանթ զօրապետին, որ
երեկ մեկնեցաւ մայրաքաղաքէս:

Եանեայէն ու Թրֆալայէն եկած
վերջին լուրերն ապստամբութեան
օր քան զօր ընդորձակումը կը ծա-
նոյցանեն: Ապստամբք՝ այլ և այլ
հրոսախումբերու բաժնուած՝ երկ-
րին այլ և այլ կողմերը կարշաւեն և
ուղղամարտական գերքերը դրաւե-
րու կաշխատին: Օսմանեան զօրքը
քանի մը կռիւներ ըրեր է ապստամ-
բաց հետ, բայց սակաւաթիւ ըլլա-
լով չէ կրցեր գանձնք վանել: Այս
պատճառաւ հետզհետէ զօրք կը զըր-
կուի յիշեալ դաւառները:

Պատրիէթ լրագիրը կը ծանուցա-
նէ թէ տէրութեան բոլոր պաշտօ-
նարաններուն մէջ միջոցներ ձեռք
կառնուին խնայողութեան համար
պաշտօնատարաց թիւը պակսեցնելու
և խոշոր ամառականներն ալ զեղչելու:

Կըսուի թէ Ռուսիա Պալլարիոյ
տալիք հարկն երաշխաւորութիւն
ցուցնելով մեծ փոխառութիւն մը
պիտի ընէ Եւրոպայէն:

Այսթէֆանոս բանակին Ռուսա-
կան զօրաց մեծ մասը քանի մ'օրէն
Սե ծովու Ռուսական նաւահանգիստ-
ները պիտի փոխադրին և ասոր հա-
մար շոգենաւեր պիտի զրկուին Օտէ-
սոյէն:

ՀԱՆՐԱՊԵՏ ԵՐԵՎԱՆԻ